

Ա. Պուղոսյան

ՊՈՒՇԿԻՆԻ ԵՐԿԵՐԻ ԱՄԵՆԱՀԻՆ ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Ռուս հանճարեղ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինի երկերի հայերեն թարգմանություններն սկսել են տպագրվել 1843 թվականից:

Հարուժյու՛ն Համազասպյանը թարգմանել է Պուշկինի բանաստեղծություններից 10-ը և հրատարակել 1843 թ. «Թարգմանութիւնք արձակ և ոտանաւոր ի Ռուսաց լեզուէ ի հայ բարբառ Պուշկինէ, Լերմոնտովայ, Բարիսինսկիոյ և Դնեդինէ» վերնագրով գրքում:

Զանազան առիթներով նշվել է, որ Ա. Ս. Պուշկինի երկերից հայերեն թարգմանություններ կատարվել են շատ ավելի վաղ շրջանում, նույնիսկ բանաստեղծի կենդանության օրով: Հիշատակվել են թարգմանված երկերի վերնագրեր, սակայն գրանցից ոչ մեկը մինչև այժմ չի հայտնաբերված:

Վերջերս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Արեղյանի անվան Իրականության ինստիտուտի Գրական թանգարանում, գրող և բանահավաք Սարգիս Քամալյանի արխիվում, ձեռագիր փաստաթղթերի մեջ հայտնաբերվեց Պուշկինի «Բախչիսարայի Շատրվանը» պոեմի հայերեն-գրարար թարգմանությունը և Պախչիսարայի Շատրվանը» վերնագրով: Ձեռագիրը չունի ստորագրություն և տարեթիվ:

Պարզվում է, որ Ա. Ս. Պուշկինի այդ նշանավոր պոեմի թարգմանչը հայագետ բանասեր Մկրտիչ Էմինն է:

Մ. Էմինը ռուս գրականությանը և հատկապես Պուշկինի երկերով հետաքրքրվել ու գրադրվել է դեռևս կադարյան ճամարանում ուսանելու շրջանում:

Ռ. Պատկանյանը՝ Մ. Էմինի մասին գրած իր հիշողություններում պատմում է, թե «Պուշկինի և Լերմոնտովի գրվածքները առաջին անգամ մեզ ծանոթացուց նա. շատ անգամ, հենց յուր դասի միջոցին ձեռքը առնում էր նոցա շարագրությունները և կարդում էր մեզ համար, և այդ կերպով մեր մեջ սեր և ճաշակ էր ձգում այդ և ուրիշ ռուս հեղինակների մասին»¹:

1833—1838 թթ. Մոսկվայում լույս տեսած «Сборник актов, относящихся к обозрению армянского народа» գրքի 3-րդ հատորի 220 էջում ասված է՝ «Մկրտիչ Էմին, սան Մոսկվայի հայկական, արևելյան լեզուների կադարյանների ինստիտուտի, ուղարկված Հնդկաստանի Գալիաթա քաղաքից այս ինստիտուտը կրթություն սովորելու համար, չափածո թարգմանել է ռուսերենից հայերեն Ա. Պուշկինի երկերից «Բախչիսարայի Շատրվանը» և «Կոսկուսյան գերին»:

Այս թարգմանությունները շուտով լույս կտեսնեն:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների Տեղեկագիր, 1949 թ. № 5-ում գոցենա՝ Լադար Այվազյանը «Ա. Ս. Պուշկինը և հայ գրականությունը» վերնագրով իր հոդվածում գրում

¹ «Մկրտիչ Էմինի երկասիրությունները», 1898, Մոսկվա, էջ 210:

է նաեւ Մ. Էմինի կատարած, վերը հիշված թարգմանությունների մասին հիշատակելով, որ այդ թարգմանությունների տպագրությունը անհայտ է, նա չի նշում ձեռագրի գոյության և նրա գրության տարեթվի մասին:

Պրոֆ. Ռ. Հովհաննիսյանի «Թուս գրականությունը հայ հասարակական մտքի գնահատմամբ» գրքում նույնպես մենք որեւէ հիշատակություն չենք գտնում վերահիշյալ թարգմանության գոյության մասին:

ՍՍԽ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի Պատմության և Գրականության ինստիտուտի կողմից Պուշկինի մահվան 100-ամյակի առթիվ, 1937 թվականին հրատարակված «Ա. Պուշկին—հոգվածներ և նյութեր» վերնագրով ժողովածուի «Ա. Ս. Պուշկինի հայերեն թարգմանությունները» բաժնի 324 էջում Մ. Էմինի կատարած թարգմանությունների մասին ասված է՝ «Այդ թարգմանությունները չեն հրատարակվել: Թարգմանության լեզուն եղել է գրարար: Թարգմանության ձեռագիրը հայտնաբերված չէ»:

Կասկած չկա, որ նորահայտ ձեռագիրը հենց այդ կորած ձեռագիրն է: Մ. Էմինի այս թարգմանությունը կատարված է հաջող կերպով, հեղինակը աշխատել է հարադատ մնալ բնագրին, պահպանելով չափը, հաղորդել բնագրի պատկերավորությունն ու երաժշտականությունը:

Բնչ հիմք ունենալ, նորահայտ թարգմանությունը վերագրելու Մ. Էմինին:

Մեր այս ենթադրությունը հաստատվում է վերահիշյալ թարգմանության ձեռագրի և Գրականության ինստիտուտի Գրական թանգարանի արխիվում պահվող Մկրտիչ Էմինի ձեռագրերի համեմատությամբ, մի բան, որը միանգամայն ավելորդ է դարձնում այլ փաստերի որոնումը:

Հնարավոր է որոշել նաև թարգմանության մոտավոր թվականը: «Сборник актов, относящихся к обозрению истории армянского народа» գրքի 3-րդ հատորը, որի մեջ հիշատակված է Մ. Էմինի այս թարգմանության մասին, լույս է տեսել Մոսկվայում 1838 թվականին, հետևապես թարգմանությունը կատարված պետք է լինի դրանից առաջ. Գրքի վրա նշված գրաքննչի թույլտվության տարեթվից էլ (1836 թ. հոկտեմբերի 16) երևում է, որ այն թարգմանված պետք է լինի մինչև 1836 թ. հոկտեմբերի 16-ը, այսինքն՝ Պուշկինի կենդանության ժամանակ:

Ստորև բերում ենք օրինակներ բնագրի և թարգմանության համավանդներից:

1. Առաջին գլխի առաջին հատվածը, ուր հեղինակը պատկերացնում է՝

Գիրեյ խանի մտահոգ վիճակը

Гирей сидел потупя взор;
Янтарь в устах его дымился;
Безмолвно раболепный двор
Вкруг хана грозного теснился.
Все было тихо во дворце;
Благоговей, все читали
Приметы гнева и печали
На сумрачном его лице.
Но повелитель горделивый
Махнул рукой нетерпеливой;
И все склонившись, идут воп.

Տրտմազգեաց դեմօք Քերիմ կիրէյ խան
Նրստէր, ձրգէր ծուխ սաթիւ ի բերան,
Անդ ըստրուկ համբալ բնտանիք նորին
Շուրջ պար ըլորեալ սոսկմամբ խրոնուին:
Լրոռթիւն տիրէր ողջոյն պալատին,
Սակայն ի մրթին յերես դռողին
Համայնք զրարկոյթեան նիշ վերածնէին.
Մերժեաց մատնանիշ անդ հրպարտրն խան
Ել անդէն արտաքս զլիսակոր խուժանն:
Միայնիկ նրստի նա իւր ի գահոյս,
Եւ ազատ շրնչեն արդէն նորին կուրծք:

Один в своих чертогах он;
Свободней грудь его вздыхает,
Живее строгое чело
Волнение сердца выражает.
Так бурной тучи отражает
Залива зыбкое стекло.

А. С. Пушкин. Полное собр. сочин.,
том II, Москва, 1936, стр. 494.

Այս ի խրոնոգեալ նորին ճակատու
Զինջ նըկարագրին վըրդովմունք սրբտին,
Այսպէս ի լոյս ջուրս պարզ պատկերանան
Ամպը մըրրկայոյդք մըթին եթերաց:

Թարգմ., ձեռագիր էջ 1-2:

Թարգմանչի կողմից Պուշկինի պոեմի չափի և երաժշտականության պահպանման լավագույն օրինակ կարող է լինել հեղինակի կողմից պոեմի մեջ բերած «Татарская песня»-ի թարգմանությունը:

ТАТАРСКАЯ ПЕСНЯ

Дарует небо человеку
Замену слез и частых бед:
Блажен факир, узревший Меку
На старости печальных лет.

Но тот блажней, о Зарема,
Кто, мир и негу взлюбя,
Как розу, в тишине гарема
Лелеет, милая, тебя.

Նույն տեղում, էջ 498:

Պուշկինի պոեմի պատկերավոր նկարագրությունները պահպանված են թարգմանչի կողմից հաջող կերպով՝ Տավրիդյան (Ղրիմի) գիշերի նկարագրության մեջ, բերենք օրինակ՝

Настала ночь; покрылись тенью
Тавриды сладостной поля;
Вдали под тихой лавров сенью
Я слышу пенье соловья;
За хором звезд луна восходит;
Она с безоблачных небес
На доли, на холмы, на лес
Сиянье томное наводит...

Նույն տեղում, էջ 502:

Բացի այն, որ Ա. Ս. Պուշկինի «Բախչիսարայի Շատրվանը» պոեմի այս թարգմանությունը կատարված է պոետական հմտությամբ, տվյալ ձեռագիրն արժեքավոր է առավելագույնս որպես ողջ հանճարեղ բանաստեղծի մեղ հասած ամենահին հայերեն թարգմանություններից մեկը, և որպես ողջ-հայ գրական կապերի դարավոր պատմությանը վերաբերող մի պերճախոս փաստաթուղթ:

ԹԱԹԱՐԱՑ ԵՐԳԸ

Ընծայէ երկինն մարդոյ
Ըգփոխարեն լալեաց, աղետից
Երանեալ Բաղիրն՝ որ տես զՄեքքայն
Յալիս ձիւնացեալ, ծանրացեալ ամօք:

Բայց երանազույն նա՝ ով Զարէմա,
Որ ըդ փափկութիւն գըրդանս սիրելով՝
Ըգքեղ դերթ ըդվարդ, նաղելով գըրկէ:
Յիւրում հարէմի:

Թարգմ., ձեռագիր էջ 10-11:

Գիշեր է արդէն, յրստուերըս ծածկին
Գաշտք շըքեղաշուք, սիրուն Թաւրիդայ.
Ընդ հեշտ հովանեաւ դարնեաց ի ըացի
Յունկս ժամանէ նըւագ սոխակի:
Ըդ հոյս աստեղաց ելանէ լուսին.—
Յանդի ի բարձանց յանամպ եթերաց
Յանտառս, ի ըլլուրս, ծաղկաբեր հովիտս
Զաղօտիկ իւր լոյս կաթեցուցանէ:

Թարգմ., ձեռագիր էջ 18-19: